ՈՐՈՇՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
«ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

Ք. Երևան 03.10.2023թ.
ժամը 12:00

Հանձնաժողովի նախագահ՝

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Խ. Խաչատրյան

Անդամներ՝

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի օգնական Թ. Կարապետյան

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի բյուջետային գործընթացի պատասխանատու Ա.Մարգարյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ Ն. Մկրտչյան

1. Տեղեկություն www.eauction.armeps.am էլեկտրոնային համակարգում հայտերի բացման վերաբերյալ

1.1 «**ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/6**» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հայտերը էլեկտրոնային աճուրդի www.eauction.armeps.am համակարգի միջոցով բացվել են 2023 թվականի հոկտեմբերի 02-ին ժամը 11:00-ին, իսկ հակադարձ աճուրդը տեղի է ունեցել հոկտեմբերի 03-ին ժամը 11:00-ին:

1.2 ԷԱՃ մրցույթի շրջանակներում հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունը /անվանումը, հեռախոսը և հասցեն/:

N	Մասնակցի անվանում	Հասցե, էլ. հասցե	հեռախոսահամար
1	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	ք. Երևան, Տպագրիչների 8, maxoil.llc@mail.ru	010 526 751

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

2. «ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/6» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջների համապատասխան կազմած լինելու մասին

2.1 «**ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/6**» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակցի կողմից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը.

- Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարություն համաձայն հավելված N 1-ի
- Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը
- Իրական շահառուների մասին հայտարարագիրը հավելված N 1.3-ի,

- Գնային առաջարկ՝ www.eauction.armeps.am էլեկտրոնային հարթակում:

2.2 «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի կողմից www.eauction.armeps.am համակարգում ներկայացրած հայտը համակարգի կողմից անցողիկ է, ներկայացված բոլոր փաստաթղթերը համապատասխանում են «**ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/6**» ծածկագրով հրավերով սահմանված պահանջներին:

2.3 Գնահատող հանձնաժողովի կողմից «ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է **բավարար:**

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

3. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

3.1 Հարցումներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ

4.1 Մասնակցի գնային առաջարկն հետևյալն է.

Հ/Բ	Ապրանքի անվանումը	Կանխատեսվող գնման գին / ՀՀ դրամ/	Մասնակցի անվանումը	Նախնական առաջարկ, / Վերջնական առաջարկ, / ՀՀ դրամ	
				Գումարն առանց ԱԱՀ	Ընդհանուր գին
1	Բենզին ռեգուլյար	7 200 000	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	6 000 000	7 200 000

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

5. «ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/6» ծածկագրով ռեգուլյար բենզինի ձեռքբերման ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին

Գնման հանձնաժողովը որոշեց.

5.1 Ընտրված մասնակից ճանաչել **«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ**-ին:

5.2 Հաստատել «ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-24/6» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել:

5.3 Սույն ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում:

5.4 Պայմանգիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակիցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում գնման առարկայի գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով՝ և որակավորման ապահովում՝ գնման առարկայի գնման գնի 15 (տասը) տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝	Ա. Խաչատրյան	
	Թ. Կարապետյան	
Անդամներ՝	Ա. Մարգարյան	
Քարտուղար՝	Ն. Մկրտչյան	